ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 147-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 2025թ. ապրիլի 10-ի N 01/105.3.2/03255-2025 գրությունը՝
Որոշում եմ.

1.2025 թվականի մայիսի 3-ին Թումանյան համայնքում կազմակերպել համապետական շաբաթօրյակ:

2.Հանձնարարել համայնքի կազմի մեջ գտնվող բնակավայրերի վարչական ղեկավարներին,ՀՈԱԿ-ների տնօրեններին և բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝անկախ սեփականության ձևից.

1/համապետական շաբաթօրյակի իրականացման գործողությունների պլանի ու տարածքների սխեմաների համաձայն կատարել համայնքի բնակավայրերի մաքրման և բարեկարգման աշխատանքներ՝ ձմռան ամիսների ընթացքում կուտակված աղբից մաքրել շրջակա միջավայրը,

2/առանձնակի հսկողություն սահմանել զբոսաշրջային և պատմամշակութային տարածքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ,

3/բնակավայրերի հասարակական վայրերում,հիմնարկ-ձեռնարկներում և ավտոճանապարհների հարակից տարածքներում կատարել ծառատունկ,ինչպես նաև պահպանել կանաչ տարածքները,

4/ ապահովել համայնքի բնակավայրերում աղբահավաքման և սանիտարական մաքրման համար անհրաժեշտ տեխնիկայի,այդ թվում մասնագիտացված բեռնատար մեքենայի ներգրավվածությունը նշված աշխատանքներում:

2.Այդ աշխատանքներին ներգրավել նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, դպրոցի աշակերտներին, մանկավարժներին և համայնքի բնակչությանը:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել <<Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի և վարչական ղեկավարների վրա:

4.ՈՒժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 07-ի <<Թումանյան համայնքում համապետական շաբաթօրյակ կազմակերպելու մասին>> թիվ 123-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. ապրիլի 15
ք.Թումանյան